

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՇԱԽՄԱՏԻ ՀԱՄԱՌՈՒՄԱՍԱՆՅԱՆ 10-ՐԴ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆԸ

31.09.2025 15:30



2025թվականի օգոստոսի 28-30-ը Սանկտ Պետերբուրգում անցկացվել է փաստաբանների համար կազմակերպված «Սպիտակ թագուհի» շախմատի 10-րդ համառուսաստանյան առաջնությունը:

Առաջնության առաջին իսկ օրից Հայաստանի փաստաբանների հավաքականը աչքի էր ընկել տպավորիչ խաղով՝ գրանցելով հաղթանակ Ռուսաստանի Դաշնության տարբեր մարզերի փաստաբանների հետ մրցապայքարում:

Մրցաշարի երրորդ օրը անցկացվել է բլից մրցաշար, որը ներառում էր միայն փաստաբանների անհատական մասնակցություն:

Բլից մրցաշարին մասնակցող 62 փաստաբանների միջև անցկացվող մրցապայքարում դարձյալ հաղթանակը և պատվավոր տեղերը նվաճել են Հայաստանի փաստաբանները:

Առաջին պատվավոր տեղը գրավել է ՀՀ փաստաբանների պալատի անդամ **Զոհրակ Ապրեսյանը**,

Երկրորդ պատվավոր տեղում՝ ՀՀ փաստաբանների պալատի անդամ **Կարեն Զոհրաբյանը**,

Երրորդը տեղը զբաղեցրել է Մոսկվայի փաստաբանական միության անդամ Դենիս Լեյսլը:

Հաղթանակից հետո Հայաստանի փաստաբաններ Զոհրակ Ապրեսյանը և Կարեն Զոհրաբյանը հարցազրույց են ունեցել ռուսական լրատվամիջոցի հետ, կիսվել մրցաշարի վերաբերյալ տպավորություններով և կարծիքներով:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })